

system of society and, in particular, in its communication system, as a result of which the conventionality with regard to individual signs of the "language" of the authorities has been lost. At the same time, however, some interactions continue to be exercised by the authorities through the same signs as if no changes have occurred. According to the author, the most tangible result of this was that the meanings injected in this or that act of publicity remain not understandable and thus the number of acts of publicity of the authorities are transformed into a series of communication inconsistencies.

Key words: semiotics, system, communication, authority, language, convention, publicity.

ԱՐԺԱԽԱՆԱԿ ԽՈՍՈՒԹՅԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐԱԳՐԵՐՈՒՄ

Էմիլ Օրբուխանյան Քաղաքական գիտությունների թեկնածու

Արցախյան խնդիրը՝ որպես ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը, ինչի մասին պաշտոնապես նշված է նաև ՀՀ արտգործնախարարության կայրում¹, իր նշանակությամբ սկզբունքային է ոչ միայն ինքնին Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության համար: Հետևապես արցախյան խնդիրը՝ որպես ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը, ինչի վրա խարսխված են դրանից բխող բազմաթիվ այլ գործնքացներ, պետք է իր ուրույն տեղն ունենա նաև ՀՀ-ում գործող քաղաքական ուժերի ծրագրերում: Խոսքն այսօր ՀՀ ԱԺ-ում ներկայացված վեց քաղաքական ուժերի՝ **ՀՅԴ, Ժամանեցություն, ՕԵԿ, ԲՀԿ, ՀԱԿ** և **ՀՀԿ**, մասին է, որոնց ծրագրերում արցախյան խնդրի խոսութային վերլուծությանը կանդրադառնանը ստորև:

Որպես ավանդական կուսակցություն՝ նախ անդրադառնանը ՀՅԴ ծրագրին: **ՀՅԴ ծրագրում** նախ նշվում է Արցախյան խնդրի առաջացման պատմական նախադրյալների և զարգացման մասին: Կարևորվում է ազատազրական պայքարը: Հայ դատը կենտրոնանում

¹ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պաշտոնական կայք <http://mfa.am/hy/foreign-policy/>. (13.05.2016):

է ամբողջական Հայաստանի ստեղծման վրա՝ արևմտյան և արևելյան Հայաստանի տարածքներում։ Արցախի հարցի արդար լուծումը հանդիսանում է Հայ Դատի հանգըլվաններից մեկը։ ՀՅԴ-ն նաև նպատակադրում է, որ Միացյալ Հայաստանի սահմանների մեջ պիտի մտնեն Սերի դաշնագրով նախատեսված հայկական հողերը, ինչպես նաև՝ Արցախի, Զավախիրի և Նախիջևանի երկրամասերը։ Կուսակցության նպատակներից է նաև ապահովել Արցախյան պայմանագրի հաղթական եղքը՝ իբրև Հայ Դատի լուծման առաջնահերթ հանգըլվան²։

Նշված կետերի խոսության վերլուծության արդյունքում կարող ենք միանշանակ պնդել, որ ՀՅԴ-ն իր ծրագրում կարևորում է Արցախի միավորումը Հայաստանին՝ հայկական վյուս հողերի հետ միասին։ Այսինքն՝ առանձին կետով Արցախի տեկակի հանրապետության մասին ծրագրում չի նշվում, այլ այդ անկախությունը Միացյալ, Ազատ, Անկախ Հայաստանի տեսլականն է, որտեղ կարևորվում է Արցախի հայության՝ իր ազգային ինքնորշման իրավունքի միջազգային ճանաչման ապահովումը։

«Ժառանգություն» կուսակցության ծրագրում արցախյան խնդրին հատկացված է մեկ ամբողջական գլուխ։ Ծրագրում մասնավորապես նշվում է, որ այսօր Արցախը պետք է գոյատեսի որպես ինքնիշխան պետություն բարեպատճե ժամանակներում մայր հայրենիքին մաս դառնապու հեռանկարով։ Ղարաբաղյան հարցի կարգավորման ընթացքում բացառում ենք թե որակական, թե տարածքային միակողմանի գիծումներն ու անհամարժեք փոխանակումները։ Ըստ կուսակցության ծրագրի՝ խնդրի կարգավորման գործում վճռորշը այդ կարգավորումը մարմնավորող համաժողովրդական կամքն է ինքնուրույնաբար ու սեփական շահերից բխող որոշման ընդունման իրավունքը։ Այն պետք է ապահովի Արցախի հարցի այնպիսի լուծում, որը

- բացառում է ԼՂՀ-ի վերադարձը Աղբեկջանի կազմ։
- ապահովում է հուսապեցանաքային կազ ԼՂՀ-ի և ՀՀ-ի միջև։
- չի հախտում ՀՀ ինքնիշխանությունը սեփական տարածքների նկատմամբ։

² Ծրագիր Հայ Յեղափոխական Դաշնակցության (1998): [\(11.05.2016\):](http://www.arfd.info/hy/?p=3602)

Հաշվի առնելով, որ ԼՂՀ-ի որպես տեկափառ պետության կայացումն իրականացվել է և միջազգային իրավունքի նորմերին, և նախկին ԽՍՀՄ օրենսդրությանը համապատասխան, ԼՂՀ-ն ինքնիշխան, իրավական երկիր է, նա պետք է դարնա բանակցությունների լիիրավ կողմ. Հայաստանի և միջազգային հանրության կողմից ճանաչված հանրապետություն: «Ժառանգությունը» նպատակահարմար է գտնում մոտակա տարիների համար ԼՂՀ-ի ինքնիշխանության և քաղաքական անկախության ամրապնդումը և միաժամանակ ՀՀ-ի հետ տնտեսական, մշակութային, գիտական ու կրթական սերտաճումը և օրենսդրական դաշտերի համապատասխանեցումը: Հայաստանը պետք է նպաստի Արցախում քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի զարգացման այնպիսի մակարդակի ապահովմանը, որն անհրաժեշտ է կատարել 20-րդ դարում Արցախից և հարակից շրջաններից հեռացած շուրջ կես միլիոն հայության վերադարձի համար³:

Փաստորեն, արցախյան խնդրի կարգավորման առավել ընդգրկուն բովանդակությամբ մյուս քաղաքական ուժերի ծրագրերից առանձնանում է «Ժառանգության» ծրագիրը: Բացի արցախյան խնդրի կարգավորման դրույթներից կուսակցության ծրագրում մանրամասն նշված են նաև նրա հետազա ժողովրդավարական զարգացման հեռանկարները, ինչպես նաև ՀՀ-ի հետ սերտ համագործակցության ոլորտները:

Ինչ վերաբերում է **ՕԵԿ-ին**, ապա կուսակցության ծրագրում, որը ներկայացված է հիմնադրույթների տեսքով, արցախյան խնդրի մասին չի եղվում: Սակայն Արցախին և արցախյան խնդրին անդրադարձ կա կուսակցության կանոնադրության մեջ և նախիրնտրական ծրագրում, որտեղ (կանոնադրության մեջ) մասնավորապես նշվում է, որ ՕԵԿ-ի նպատակներից է գործուն պետական, հասարակական և իրավական մեխանիզմների ստեղծման, գործարար և մշակութային կապերի ակտիվացման ճանապարհով Հայաստան-Սփյուռք-Արցախ ներուժի համախմբումը: Կուսակցության գործելակերպում ներառված է նաև աշխուժացնել և առավել գործնական դարձնել Հայաստան-Սփյուռք-Արցախ կապերն

³ Ժառանգության ծրագիր, էջ 10: <http://www.heritage.am/hy/about/pro...>, (13.05.2016):

ու համագործակցությունն ապահովող կառուցների գործունեությունը: Զանքեր գործադրել դիվանագիտության մեջ և տեղեկատվական «պատերազմում» իրականացնելու մշտական ակտիվ գործելակերպ⁴: Կուսակցության նախընտրական ծրագրում նշվում է, որ *Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հայանպաստ լուծումը կենսական նշանակություն ունի ինչպէս Հայաստանի Հանրապետության, այնպէս էլ ամբողջ հայ ժողովրդի համար:* Այս սերտորեն առնչվում է նաև ազգային անվտանգության և տարածաշրջանային կայունության հետ կապված խնդիրներին: ՕԵԿԸ գտնում է, որ խաղաղ կարգավորումը բանակցությունների միջոցով հիմնախնդրի լուծման միակ ճանապարհն է և պետք է հենվի հետևյալ սկզբունքների վրա՝

- *Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքն անկախության կամ Հայաստանի հետ վերամիավորման ճանապարհով չի կարող լինել սակարգության առարկա,*
- *Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգությունը և Հայաստանի հետ ուղղի սահմանի կապերը չեն կարող լինել սակարկման առարկա,*
- *աներաժեշտ է հասնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ակտիվ ներգրավվածությանը բանակցող կողմ,*
- *աներաժեշտ է հասնել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչմանը և պայմաններ ապահովել դրա իրականացման համար⁵:*

Փաստորեն, հարկ է նկատել, որ ՕԵԿ ծրագրում չի խոսվում արցախան ինքըի մասին. Կուսակցության կանոնադրության մեջ Արցախին անդրադարձ սահմանափակվում է *Հայաստան-Սփյուռք-Արցախ համագործակցային եռամիանության մեջ*: Մինչդեռ կուսակցության նախընտրական ծրագրում հստակ ընդգծվում են Արցախյան խնդրի կարգավորման ուղղությունները:

ԲՀԿ ծրագրում առանձին կետով նշվում է, որ *Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման ապահովմամբ, հակամարտության երկու կողմերի՝ Արցախի և Աղրբեջանի*

⁴ ՕԵԿ կանոնադրություն, <http://www.oek.am/index.php?option=....> (13.05.2016):

⁵ ՕԵԿ նախընտրական ծրագիր, <http://www.oek.am/index.php?option=....> (13.05.2016):

կատարած **փոխգիքումների հիման վրա**, անվտանգության միջազգային երաշխիքների ամրագրմամբ Արցախի հիմնախնդրի խաղաղ, քաղաքական ճանապարհով կարգավորումը ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկն է: ԲՀԿ-ն անհրաժեշտ է համարում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բազմակողմ և ուղղակի բանակցություններին գուգընթաց համակողմանիորեն աջակցել Արցախի անվտանգության ապահովմանը, ժողովրդավարացմանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային ինտեգրմանը: «Բարգավաճ Հայաստանի» համար ընդունելի է արցախյան հիմնախնդրի այնպիսի կարգավորումը, որի բանակցային գործընթացում **LՂՀ-ն հանդես կցա որպես լիիրավ կռում**, իսկ Արցախի կարգավիճակի հարցում կրացառվի որևէ լուծում՝ առանց Արցախի ժողովրդի համաձայնության: Մեր համոզմամբ **LՂՀ անկախաւորունն այլընտրանք չունի:**⁶

Փաստորեն, ԲՀԿ ծրագրում սկզբունքայնորեն հստակ ընդգծված են այն պատկերացումները, որոնց շրջանակներում տվյալ քաղաքական ուժը տեսնում է արցախյան խնդրի կարգավորման հեռանկարը:

Վերլուծենք արցախյան խնդրի վերաբերյալ **ՀԱԿ-ի ծրագրային** մոտեցումները: Կուսակցության ծրագրում նշվում է, որ արտաքին քաղաքականության բնագավառում անհրաժեշտ է բարիդրացիական հարաբերությունների ամրապնդումն ու խորացումն անմիջական հարեւանների՝ **Հռուսաստանի, Վրաստանի, Իրանի հետ, կառուցողական շանելիքի գործադրումը Թուրքիայի և Ադրբեյջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:** Բայց ինչ վերաբերում է բուն արցախյան խնդրին, ապա այս առումով ծրագրում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում անհրաժեշտ է քաղաքական կամքի դրսևորում՝ հանդես գալով **արցախյան հարաբերության ինքնորոշման իրավունքի պաշտպանության և հարցի լուծման փոխգիքումնին տարրերակի որոնման դիրքերից:**⁷ Փաստորեն, կուսակցության ծրագրի արտաքին քաղաքականությանը նվիրված բաժնում առանձին նշվում է արցախյան խնդրի կարգավորման մասին՝ կարևորելով ինքնորոշման իրավունքի

⁶ԲՀԿ ծրագիր, Երևան, 2007, էջ 30: <http://bhk.am/sites/default/files/d....>, (13.05.2016):

⁷ՀԱԿ ծրագիր, կազմված է 13.04.2013թ. և բաղկացած է 14 (տասնչորս) թերրից: http://www.anc.am/?page_id=1024, (13.05.2016):

պատշպանությունը և, ինչպես ԲՀԿ դեպքում էր, հարցի լուծման փոխգումային տարբերակի որոնումը: Սակայն ՀԱԿ ծրագրում *Արցախի անկախության մասին* առանձին կետով հիշատակում չկա:

ՀՀԿ ծրագրում, որտեղ առանձնացված են կուսակցության արժեքները, **չի խոսվում արցախյան խնդրի մասին,** այլ ուղղակի նշվում է, որ արտաքին քաղաքականության ոլորտում պետության գործունեությունը պետք է ուղղված լինի հարևան երկրների հետ բարիդրացիական և կայուն հարաբերությունների հաստատմանն ու պահպանմանը, միջազգային հանրությանը բնականոն ինտեգրմանը, նրանում Հայաստանի դերի մեծացմանը, աշխարհի բոլոր երկրների հետ փոխահավետ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ կապերի զարգացմանը:⁸

Ըստհանրացնելով վերոշարադրյալը՝ հարկ է նշել, որ կուսակցությունների ծրագրերում արցախյան խնդրի արտացոլումը փաստում է դրա վերաբերյալ հստակ ձևավորված պատկերացում ունենալու մասին: Համապատասխան դրույթների ամրագրումը կուսակցության ծրագրում նաև պարտավորեցնում է տվյալ քաղաքական ուժին գործել դրանց համապատասխան: Սակայն, համեմայն դեպքում, գործնականում, որոշ կուսակցական գործիչների մասնավոր պատկերացումները կարող են չհամապատասխանել իրենց կուսակցության ծրագրային դրույթներին, ինչը, իհարկե, կարող է վկայել այդպիսի կուսակցականների տվյալ կուսակցությանը անդամակցելու ոչ թե զաղափարական, այլ պատեհապաշտական դրույթապատճառների մասին: Իսկ եթե այդպիսի դրույթներ չկան կուսակցության ծրագրում, ապա նույնիսկ չհակասել դրանց: Այդպիսի քաղաքական գործիչները հաճախ են փոխում կուսակցական տոմսերը:

Արցախյան խնդրի վերաբերյալ կուսակցությունների ծրագրերի համեմատական վերլուծությունը բույլ է տալիս առանձնացնել **միքանի կարևոր հետևողություններ**.

• Հարկ է նկատել, որ ՀՅԴ ծրագրում ի տարբերություն ՀԱԿ-ի և ԲՀԿ-ի **չի եղանակ որևէ փոխգիծման կամ զիջման մասին,** որոնք Արցախի հարցի կարգավորման տեսանկյունից մշտապես *Աղբքանին տրամադրում են այն բանին, որ մենք իրեն տալու բան*

⁸ՀՀԿ ծրագիր: <http://www.hhk.am/hy/program/>. (13.05.2016):

ունենք, իսկ ինքը ստանալիք ունի Արցախից՝ տարածքի տեսքով։ Իսկ դա մշտապես պատերազմ կրահրող և հարցի լուծումը խճռող գործն է։ Նկատենք, որ երբեմն կուսակցության ծրագրի դրույթները և կուսակցական գործիչների խոսույթը կարող են չհամապատասխանել իրար։ Ինչպես վերջին շրջանում որպէս դաշնակցական գործիչներ խոսում էին փոխզիջումների մասին՝ գուցե ծանոթ չլինելով կամ մոռանալով ՀՅԴ ծրագրային դրույթները արցախյան հարցի վերաբերյալ։ Դա նշանակում է, որ կուսակցական այդայիսի գործիչների օպորտունիտական նկրտումներն անձնական քաղաքական շահի բավարարման նպատակով կարող են ստվերել հայկական ավանդական կուսակցության՝ ՀՅԴ-ի ողջ ներդրումը հայկական պետականության կերտման գործում, ինչն անբույլատրելի է, քանի որ ՀՅԴ-ն միակ քաղաքական ուժն է որը ոչ միայն կարևորում է արցախյան խնդրում առանց փոխզիջումների մոտեցումը, այլև իր ծրագրում ամրագրում է Հայկական բոլոր հոգերի միավորման գաղափարը մեկ ամրողական պետական միավորի մեջ։ Հետևապես՝ որոշ դաշնակցականների գիշողական անձնական դիրքորոշումը որևէ աղերս չունի ՀՅԴ ծրագրի հետ։ ՀՅԴ ծրագիրը հայկական հոգերի միավորման առումով ենթադրում է ապագայում պետական կառուցվածքի դաշնային ձև, իսկ Արցախի խնդրի լուծումը կարող է այդ տրամարանության սկիզբը դարձնալ։

• Փոխազիջումների առումով որոշակիորեն տարբերվում է նաև ժառանգության ծրագիրը, որտեղ բացառվում են որպակական, տարածքային միակողմանի զիջումները, անհամարժեք փոխանակումները, ինչպես նաև Արցախի վերադարձ Աղբբեշանի կազմ։ ԺԿ-ն կարևորում է նաև բարեպատեհ ժամանակ Մայր Հայրենիքին Արցախի միավորման գաղափարը։ Սակայն ԺԿ ծրագրում առկա <<զիջում>> եզրույթ, չնայած որ բացառում է դրա միակողմ բնույթը, այնուամենայնիվ, նշանակում է, որ ըստ ԺԿ ծրագրի հայկական կողմը տարածքային զիջման կզնա միայն այն դեպքում, եթե տարածքային համարժեք զիջման զնա նաև աղբբեշանական կողմը։ Սակայն նկատենք, որ այս մոտեցումը հստակեցման կարիք ունի, քանի որ Աղբբեշանի դեպքում գործ ունենք ոչ թե հակառակորդի, այլ թշնամու հետ, որի հետ գործարքի գնալը մեզ անվտանգության որևէ երաշխիք չի կարող տալ առակե-

ևս զիջումների պարագայում: Հետևապես՝ պետք է ուղղակի բացառել ցանկացած տիպի, թե կուզ և երկկողմ կամ համարձեր զիջում:

• ՕԵԿ-ի (նախընտրական) ծրագրում, ինչպես ՀՅԴ ծրագրի դեպքում, **զիջման կամ փոխզիջման մասին որևէ դրույթ չկա.** Ավելին՝ ինչպես ՀՅԴ-ն, ԺԿ-ն, այնպես էլ ՕԵԿ-ը բարձրացնում և պաշտպանում է Հայաստանի Հանրապետության հետ Արցախի Վերամիավորման զաղափարը հավաքելով, որ դա չի կարող լինել սակարգության առարկա:

Հետևապես ՕԵԿ-ի ծրագիրը արցախյան հարցի առումով, ինչպես և ՀՅԴ-ինը համապատասխանում է <<ռեալ պոլիտիկին>> և արտահայտում է հայկական ազգային-պետական շահը: Սակայն կրկին ընդգծենք, որ ՕԵԿ-ի դեպքում այս դրույթներն ամրագրված են ոչ թե կուսակցության ծրագրում, այլ նախընտրական ծրագրում, իսկ դա իր նշանակությամբ ուղղված է ուժի քաղաքական շահերի իրացմանը ընտրողներից ձայներ ստանալու նպատակով: Նկատի ունենանք, որ նախընտրական ծրագրերը մշտապես կարելի է փոփոխել ընտրություն առ ընտրություն:

• Ինչ Վերաբերում է ԲՀԿ-ի և ՀԱԿ-ի ծրագրերում **զիջումային, փոխզիջումային քաղաքականությանը արցախյան եարցում,** ապա դա, մեղմ ասած, աղեկված չէ արդի զարգացումներին և չի ընդունվում հասարակության կողմից, քանի որ հակասում է ազգային-պետական շահին: ՀԱԿ-ի պարագայում հարկ է ուշադրություն դարձնել նաև «կատարածական ջանքերի գործադրումը Թուրքիայի և Աղրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ» դրույթներին, որոնք ամեննեն չեն բխում մեր շահերից այն պարզ պատճառով, որ այդ երկու թուրքական պետություններն ամեն ինչ անում են, որպեսզի մեզ հետ հարաբերությունները չկարգավորվեն կամ կարգավորվեն իրենց պատկերացումներին համապատասխան: **Հիշենք մի քանի վաստեր,** որոնք հիմնավորում են մեր հետևությունը: **1-ին** հայ-թուրքական սահմանի փակումը Թուրքիայի կողմից որպես քաղաքական աջակցություն Աղրբեջանին արցախյան խնդրի մասով, **2-րդ** հայ-թուրքական թվայցալ «առանց նախապայմանների 2 արձանագրությունները», որոնք որևէ կերպ չեն համապատասխանում մեր շահերին և նույնիսկ չկավերացվեցին Թուրքիայի կողմից: Միևնույն ժամանակ դրանք դեռ չեն չեղարկվել մեր կողմից: Հետևապես՝ **ՀԱԿ-ի՝ Թուրքիայի և Աղրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերը սին են,**

քանի որ որքան էլ ցանկանաս բացել Թուրքիայի «դուռը», չես կարող դա անել մի պարզ պատճառով, որովհետև այդ «դուռը» դու չես փակել, իսկ «կողպերի բանալին» ոչ թե քո, այլ կրկին Թուրքիայի ձեռքում է: **Արդյոք մեր ազգային-պետական շահը թէշադրում է աղերսել Թուրքիային բացել սահմանները,** եթե Թուրքիան դա կանի միայն այն ժամանակ, եթե բավարարվեն նրա շահերը: **Որքանը վէ ՀԱԿ-ի այս դիրքորոշումը համապատասխանում հայկական ազգային-պետական շահին:** Իսկ ինչպիսի ն պետք է լինեն Աղրեջանի հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերը: **Զիջումների տեսքով:** Ազգ-պետություն կերտելու, Հայրենիքը պաշտպանելու, մեկ թիզ հող չգիշելու համար իրենց կյանքը հերոսաբար զոհաբերած զիջումների մասին ոչ միայն խսելը, այլև դրանք կուսակցության ծրագրային դրույթների տեսքով ամրագրելը կամ <<ամուրդով վաճառելը>>: ԱՅՍՊԻՄ ԴՐԺՇՈՇՈՒՄՆԵՐԸ Վշտապես ՊԱՏԵՐԱԶՄԱՆԻՆ է, իսկ հետանկարի առումով ՎՏԱՆԳՈՒՄ է ոչ միայն ԱՐՅԱՆԻ, այլև ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանանությունը:

Արցախյան խնդրի պարագայում ուշագրավ է ՀՀԿ դեպքը, որի ծրագրում և կանոնադրության մեջ չկան արցախյան խնդրի վերաբերյալ առանձին դրույթներ: Սակայն դա չի նշանակում, որ այդ ուժն արցախյան խնդրի վերաբերյալ չունի դիրքորոշում: Փաստացիորեն տվյալ քաղաքական ուժն է զբաղվում արցախյան խնդրով, քանի որ ունի քաղաքական մեծամասնություն: Իսկ արցախյան խնդրի մասին կուսակցության ծրագրից համապատասխան դրույթների բացակայությունը տվյալ քաղաքական ուժի համար մասներու ավելի լայն դաշտ է ստեղծում: Քանի որ չկան դրույթներ, որոնք ծրագրային առումով կսահմանափակեն, կպարտադրեն կամ նույնիսկ կկաղապարեն ՀՀԿ քաղաքականությունն արցախյան խնդրի կարգավորման գործում: Խոսքը բացառապես ՀՀԿ ծրագրի մասին է: Դրույթների բացակայությունը նաև քաղաքական ճկունություն է հաղորդում ՀՀԿ-ին, եթե վերջինիս քաղաքականությունը կարող է փոփոխվել արտաքին և ներքին ազդակների ազդեցությանը և արցախյան խնդրի շուրջ ստեղծվող հանգամանքներին համապատասխան:

Հ.Գ. Հայաստանի ազգային-պետական շահն ուղղակիորեն

կապված է արցախյան խնդրի հետ: Հետևապես՝ անհրաժեշտ է համախմբվել ազգային-պետական շահի շուրջ և գործել բացառապես դրա շրջանակներում: Եթե գործ ունենք ազգային-պետական շահի հետ, անհրաժեշտ է հստակություն, քանի որ փոփոխականությունը սակարգությունների հնարավորություն է ստեղծում, ինչը վտանգում է ազգային-պետական շահը: Հաստատունի և փոփոխականի միջև, միանշանակ, առավելությունը պետք է տալ առաջինին: Այսինքն՝ արցախյան խնդրի վերաբերյալ պետք է ունենալ ոչ թե փոփոխական, այլ հաստատուն դիրքորոշում՝ հիմնված բացառապես ազգային-պետական շահի վրա:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է արցախյան հիմնախնդիրը հայաստանյան քաղաքական կուսակցությունների ծրագրերի խոսութային վերլուծության միջոցով: ՀՀ-ում ներկայացված վեց կուսակցությունների ծրագրերում նկատվում են տվյալ խնդրի վերաբերյալ տարբեր դիրքորոշումներ: Որոշ կուսակցություններ առաջ են քաշում փոխզիջումների մասին դրույթներ, մյուսները կարտրում են խնդրի դիմարկումն ազգային-պետական շահերի համատեքստում:

Հոդվածում որպես եզրակացություն, ընդգծվում է այն մոտեցումը, որ երբ խոսքը վերաբերում է ազգային և պետական շահերին (իսկ արցախյան խնդիրը հենց այդպիսին է), ապա անհրաժեշտ է հստակություն, քանի որ փոփոխականությունը կամ տատանողականությունը որոշ կուսակցությունների ծրագրերում հիմք է ստեղծում «առևտրի» համար, ինչն ինքնին սպառնալիք է ազգային շահերին: Հաստատունի և փոփոխականի միջև, միանշանակ, առավելությունը պետք է տրվի առաջնին: Այլ կերպ ասած արցախյան խնդրի մասին պետք է ունենալ ոչ թե փոփոխական, այլ ստույգ և ամուր դիրքորոշում՝ հիմնված բացառապես ազգային և պետական շահերի վրա:

Բանայի բառեր. Արցախյան խնդիր, խոսութային վերլուծություն, կուսակցական ծրագրեր, ազգային-պետական շահ:

ДИСКУРС-АНАЛИЗ АРЦАХСКОГО ВОПРОСА В ПРОГРАММАХ АРМЯНСКИХ ПАРТИЙ

Эмиль Ордуканян
Кандидат политических наук

РЕЗЮМЕ

В статье исследуется арцахский вопрос с помощью дискурс-анализа программ армянских политических партий. В программах шести партий представленных в Национальном Собрании РА отмечаются разные взгляды по поводу данного вопроса. Некоторые партии выдвигают тезис взаимных уступок, а другие считают важным рассмотрение вопроса с точки зрения национальных интересов.

В статье делается вывод о том, что когда мы имеем дело с национальными и государственными интересами (а Арцахский вопрос именно такой), нужна ясность, поскольку изменчивость и волатильность в некоторых партийных программах создают возможность для торгов, что ставит под угрозу национальный интерес. Между константом и переменной, конечно, преимущество следует отдавать первому. Другими словами, по поводу арцахского вопроса нужно иметь не переменчивую, а твердую позицию, основанную исключительно на национальных и государственных интересах.

Ключевые слова: арцахский вопрос, дискурс-анализ, партийные программы, национальный интерес.

DISCOURSE-ANALYSIS OF ARTSAKH ISSUE IN ARMENIAN PARTIES PROGRAMS

Emil Ordughanyan

PhD in Political Science

SUMMARY

The article explores the Artsakh issue by means of discourse analysis of Armenian political parties programs. Different views and approaches are marked on this issue in the programs of six parties represented in the National Assembly of RA. Some parties put forward the thesis of mutual concessions, while others give advantage to consider the issue in terms of national interests.

The article concludes that when we are dealing with the national interests (as the Artsakh issue is such), we need clarity, since the volatility of some parties' programs creates an opportunity for trading that jeopardizes national interests. Between a constant and a variable, of course, the advantage should be given to the first one. In other words, our position on Artsakh issue should be firm, and

exceptionally based on national interests.

Key words: Artsakh issue, discourse analysis, parties' programs, national interest.

ՈՒԱԾՄԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՏԵՂՆ ՈՒ ՆԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԵՂ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂԱՑՈՒՄ

**Գուրգեն Սիմոնյան
Քաղաքական զիսուրյունների թեկնածու**

Կառավարումը եղել և մնում է մարդկային քաղաքակրթության զիսավոր հիմնախնդիրներից մեկը: Կառավարող ընտրանուկացությունը և . իշխանության ֆենոմենի հիմնախնդիրները չեն կորցրել իրենց արդիականությունը XXI դարում:

Տեղեկատվականորդական հնարավորություններն ու կրթության հասանելիությունը ավելի արդյունավետ պայմաններ են ընձեռում պետական իշխանության իրականացման համար, սակայն պետական կառավարման արդյունավետության բարձրացման և ժողովրդակարացման գործընթացի շարունակականության ապահովման տեսանկյունից այն շարունակում է մնալ քաղաքազիտական և քաղաքատնտեսական կարևորագույն հարցերից մեկը: Վերջինիս կարևորությունն ու արդիականությունն է ավելի է դատնում ակնառու, եթե այն դիտարկվում է ոչ միայն ներպետական անկայունության, այլ նաև տարածաշրջանային և համաշխարհային «չարիքների» առաջացման տեսանկյունից:

XXI դարում առկա են այնպիսի հիմնախնդիրներ, որոնց լուծումն ու կանխարգելումը վեր է առանձին պետության հնարավորություններից: Դրանց լուծման համար անհրաժեշտ է պետական դաշինքների, միջազգային կազմակերպությունների և համաշխարհային հանրության գործուն միջամտությունը: Նմանատիպ «չարիքների» դասին են պատկանում. ահաբեկչությունը, ցեղասպանությունները, թրաֆիքինզը, թմրամոլությունը և ենթամշակութային այլասերումը, տեխնոգենն և հումանիտար աղետները, բնության և բանականության էկոլոգիան: Վերջին ժամանակների իրադարձությունները, մասնավորապես «արարական գարնանը» հաջորդած տարիները, վկայում են, որ հումանիտար